



ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՄԱՆՈՒԿ ՄՈՎԱՐԻՍՅԱՆ

ՀՊՏՀ կառավարման ֆակուլտետի դեկան,
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՎՐԱ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ԱԶՇԵՑՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Հոդվածում կատարվել է <<պետական բյուջեի եկամուտների վրա ազդող գործնների մակարդակի և դիմամիկայի վերլուծություն, ինչպես նաև, կիրառելով ինդեքսային մեթոդը, գնահատվել է յուրաքանչյուր գործոնի ազդեցության չափը բյուջեի եկամուտների մակարդակի փոփոխության վրա։

Հիմնաբառեր. բյուջեի եկամուտներ, հարկային եկամուտներ, աճվանական ՀՆԱ, իրական ՀՆԱ, դեֆյասոր

JEL: C4, H60, H68

Ազգային հաշիվների համակարգի (ԱՀՀ) մեթոդաբանության և պետական ֆինանսների միջազգային չափորոշիչների հենքի վրա նշակված միջազգային վիճակագրության նյութերը հնարավորություն են ընձեռում վերլուծելու տարրեր երկրների ֆինանսների բնագավառում տեղի ունեցող գործընթացները։ Դա մասնավորապես վերաբերում է պետական բյուջեի եկամուտների միտումների և դրանց վրա ազդող գործոնների բացահայտմանը, որի արդյունքում պետությունը կարգավորում է տնտեսության զարգացման տեմպերը և կառուցվածքը, ՀՆԱ ստեղծման, բաշխման և վերաբաշխման համամասնությունները։

Հոդվածի ուսումնասիրության առարկան <<պետական բյուջեի եկամուտների աճի գործոնների բացահայտումը և ինդեքսային մեթոդի օգնությամբ դրանց ազդեցության չափի գնահատումն է, ինչը հնարավորություն կընձեռի համադրելու <-ում ձևավորված միտումներն այլ երկրներում տեղի

ունեցող գործընթացների հետ, բացահայտելու առանձին երկրների ընդհանուր գժերը և օրինաչփությունները:

1998–2014 թթ. ժամանակաշրջանի բոլոր տարիների (բացառությամբ 2000 և 2009 թթ.) ՀՀ պետական բյուջեի ինչպես ընդհանուր, այնպես էլ հարկային եկամուտների հիմնական աղյուրների մակարդակները, բացարձակ արտահայտությամբ, արձանագրել են աճի միտումները. մասնավորապես՝ ՀՀ պետական բյուջեի ընդհանուր եկամուտներն աճել են 5.8 անգամ՝ 2014 թ. կազմելով 1144.8 մլրդ դրամ, իսկ հարկային եկամուտները 1998 թ. կազմել են 158.9 մլրդ դրամ և, աճելով 6.7 անգամ կամ 905.2 մլրդ դրամով, 2014 թ. կազմել են 1064.1 մլրդ դրամ կամ ամբողջ եկամուտների 93.0 տոկոսը¹:

1998–2014 թթ. ժամանակաշրջանում հարկային մուտքերը ընդհանուր եկամուտների մեջ տատանվել են 80.8–93.4 տոկոսային միջակայքում: Ամենամեծ մասնաբաժինն արձանագրվել է 2013 թ.՝ 93.4 տոկոս²: Արձանագրված միտումները պահպանվել են նաև 2015–2017 թթ. ժամանակաշրջանում (աղյուսակ 1):

Այդուսակի տվյալներից պարզ է դարձին (2000–2005 թթ.) ինգանյա ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջեի եկամուտների աճը՝ տարեկան միջին հաշվով ավելանալով 16.0 տոկոսային կետով, կազմել է 210.3 տոկոս: Հաջորդ հնգամյա ժամանակահատվածներում բյուջեի եկամուտների աճի տեմպը տարեկան, միջին հաշվով, շուրջ 4 տոկոսային կետով դանդաղելով՝ կազմել է համապատասխանաբար՝ 181.0 և 149.6 տոկոս, ընդ որում, այդ միտումներն արձանագրվել են հարկային եկամուտների աճի տեմպերի դանդաղման հաշվին, իսկ 2016 թ. համեմատությամբ 2017 թ. պետական բյուջեի եկամուտներ մակարդակն աճել է 5.7 տոկոսային կետով:

Դիտարկվող ժամանակաշրջանում ՀՆԱ մակարդակներում ինչպես շուրջ կայական, այնպես էլ համադրելի գներով արձանագրվել են աճի միտումներ, մասնավորապես՝ 2000 թ. նկատմամբ 2005 թ. անվանական ՀՆԱ-ն աճել է շուրջ 2.2 անգամ, իսկ իրական ՀՆԱ-ն՝ 1.8 անգամ, այնուհետև նվազելով, 2010 թ. նկատմամբ 2015 թ. աճը կազմել է համապատասխանաբար՝ 145.8 և 124 տոկոս: Առաջին երկու հնգամյա ժամանակահատվածների բարձր աճի միտումները պայմանավորված են եղել 2002–2008 թթ. արձանագրված աճի բարձր տեմպերով:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում աճել են նաև գների փոփոխությունը բնութագրող ցուցանիշի՝ դեֆյաստորի մակարդակները, մասնավորապես՝ 2000 թ. համեմատությամբ 2005 թ. մակարդակն աճել է 22.2 տոկոսային կետով, համեմատվող հաջորդ հնգամյա ժամանակաշրջաններում համապատասխանաբար՝ 27.7 և 17.6 տոկոսային կետով, իսկ 2017 թ. դեֆյաստորը կազմել է 102.2 տոկոս (աղյուսակ 1):

Հարկային քաղաքականության մակրոտնտեսական ցուցանիշներից է պետական բյուջեի եկամուտների, մասնավորապես՝ հարկային եկամուտների և ՀՆԱ հարաբերակցությունը: Զարգացած տնտեսությամբ երկրներում այս ցուցանիշի մակարդակները տատանվում են միջինում 35–45%-ի, Կենտ-

¹ Տես Մ. Մովսիսյան, «ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների կառուցվածքի և դիմամիկայի վիճակագրական վերլուծությունը», «ՀՀ մարզային տնտեսության զարգացման հիմնախնդիրները» հանրապետական գիտաժողովի նյութեր, Եղեգնաձոր, 2016, էջ 116–132:

² Տես նոյն տեղը:

րոնական և Արևելյան Եվրոպայի անցումային տնտեսություններում՝ 30–40%-ի, իսկ ԱՊՀ երկրների մեջ մասում՝ 25–30%-ի սահմաններում³:

**ՀՀ ՀՆԱ և պետական բյուջեի եկամուտներ/ՀՆԱ հարաբերակցության
մակարդակը և շարժմանը⁴**

Ցուցանիշներ	Զարդի միավոր	2000	2005	2010	2015	2016	2017
ՀՆԱ (շուկայական գներով)	մլրդ դրամ	1031.3	2242.9	3460.2	5043.6	5067.3	5568.9
ՀՆԱ աճի տեմպը	%	100	217.5	154.3	145.8	100.5	109.9
ՀՆԱ (նախորդ ժամանակաշրջանի /համադրելի/ գներով)	մլրդ դրամ	1045.7	2173.1	3210.8	4983.1	5053.7	5447.3
ՀՆԱ իրական աճի տեմպը	%	100	178.0	120.8	124.0	100.2	107.5
Դեֆլատոր	%	100	122.2	127.7	117.6	100.3	102.2
Ընդամենը պետական բյուջեի եկամուտներ*	մլրդ դրամ	205.0	431.1	780.4	1167.7	1171.1	1237.8
Ընդամենը պետական բյուջեի եկամուտների աճի տեմպը	%	100	210.3	181.0	149.6	100.3	105.7
Ընդամենը եկամուտներ/ՀՆԱ	%	19.9	19.2	22.6	23.2	23.1	22.2
1. Եկամուտներ	մլրդ դրամ	196.5	419.4	749.9	1137.9	1139.7	1223.1
Եկամուտներ/ՀՆԱ	%	19.1	18.7	21.7	22.6	22.5	22.0
1.1. Հարկեր և տուրքեր	մլրդ դրամ	185.4	390.2	699.4	1067.9	1079.7	1158.0
Հարկերի աճի տեմպը	%	100	210.5	179.2	152.7	101.1	107.3
Հարկեր/ՀՆԱ	%	18.0	17.4	20.2	21.2	21.3	20.8
1.1.1. Ավելացված արժեքի հարկ ԱԱՀ/ՀՆԱ	մլրդ դրամ	66.8	146.8	301.7	423.9	391.1	406.6
%	%	6.5	6.5	8.7	8.4	7.7	7.3
1.1.2. Շահութահարկ	մլրդ դրամ	20.4	46.6	77.8	103.7	127.2	109.9
Շահութահարկ/ՀՆԱ	%	2.0	2.1	2.2	2.1	2.5	2.0
1.1.3. Եկամտային հարկ	մլրդ դրամ	46.3	90.5	179.3	320.2	332.8	341.5
Եկամտային հարկ/ՀՆԱ	%	4.5	4.0	5.2	6.3	6.6	6.1
1.1.4. Ակցիզային հարկ	մլրդ դրամ	26.1	38.6	48.1	49.0	59.7	82.3
Ակցիզային հարկ/ՀՆԱ	%	2.5	1.7	1.4	1.0	1.2	1.5
1.1.5. Այլ հարկային եկա- մուտներ	մլրդ դրամ	16.9	45.7	72.5	135.7	135.5	180.6
Այլ հարկային եկամուտներ/ՀՆԱ	%	1.6	2.0	2.0	2.7	2.7	3.2
1.1.6. Պետական տուրք	մլրդ դրամ	8.9	17.3	20.0	32.4	33.3	37.1
Պետական տուրք/ՀՆԱ	%	0.9	0.8	0.6	0.6	0.7	0.7
1.2. Այլ եկամուտներ	մլրդ դրամ	11.1	29.2	50.4	70.0	60.0	65.2
Այլ եկամուտներ/ՀՆԱ	%	1.1	1.3	1.5	1.4	1.2	1.2
2. Դրամաշնորհներ	մլրդ դրամ	8.5	11.6	30.6	29.9	31.4	14.6
Դրամաշնորհներ/ՀՆԱ	%	0.8	0.5	0.9	0.6	0.6	0.3

ՀՀ-ում պետական բյուջեի հարկային եկամուտներ/ՀՆԱ հարաբերակցությունը թեև 2000–2017 թթ. հիմնականում (բացառությամբ 2003, 2015 և

³ Տես <https://data.oecd.org/gga/general-government-revenue.htm#indicator-chart>.

⁴ Աղյուսակի տվյալները հաշվարկել է հեղինակը ՀՀ Վելյաների հիման վրա:

* 2000–2005 թթ. ՀՀ պետական բյուջեի եկամուտների մակարդակների ցուցանիշները տարբեր վում են պաշտոնական տվյալներից, քանի որ Վերահաշվարկված են միամնական դասակարգմանք: Տես Մ. Մովսիսյան, «ՀՀ պետական բյուջեի եկամուտների դասակարգման համադրելիության ապահովման մոտեցումները», Եր., «Բանբեր ՀՊՏՀ», N1, 2016, էջ 115–122:

2017 թթ.) աճել է և 2017 թ. կազմել 20.8 տոլոս,⁵ այնուամենայնիվ, բավականաչափ ցածր է զարգացած և անցումային տնտեսությամբ բազմաթիվ երկրներում արձանագրված մակարդակներից:

Հարկեր/ՀՆԱ ցուցանիշի մակարդակների տատանումները պայմանավորված են եղել հարկերի և ՀՆԱ աճի միտումներով: Այն տարիներին, երբ հարկային բեռի ցուցանիշի մակարդակները արձանագրել են աճի միտումներ, պայմանավորված են եղել հարկային եկամուտների աճի առաջանցիկ տեմպերով: 2005 թ. սկսած՝ հարկային եկամուտների աճի տեմպերը կամ գերազանցել են, կամ հավասար են եղել ՀՆԱ աճի տեմպերին (աղյուսակ 1):

Հարկային եկամուտներ/ՀՆԱ ցուցանիշի արձանագրված մակարդակների 80–87 տոլոսը ապահովել են ՀՀ պետական բյուջեի հիմնական հարկատեսակներ/ՀՆԱ հարաբերակցության արձանագրված մակարդակները (աղյուսակ 1):

Վերլուծության արդյունքներից պարզ է դառնում, որ ՀՀ պետական բյուջեի եկամուտների աճը պայմանավորող գործոնների՝ ՀՆԱ ֆիզիկական (համադրելի գներով) ծավալի, ՀՆԱ-ի մեջ (ընթացիկ գներով) պետական բյուջեի եկամուտների բաժնեմասի և գների փոփոխության մակարդակներում, դիտարկվող ժամանակաշրջանում, արձանագրվել են աճի միտումներ: Հետևաբար՝ ՀՀ պետական բյուջեի եկամուտների աճի վրա ազդող յուրաքանչյուր գործոնի ազդեցության չափը գնահատելու համար անհրաժեշտ է իրականացնել գործոնային վերլուծություն՝ կիրառելով ինդեքսային մեթոդը:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում պետական բյուջեի եկամուտների բացարձակ հավելածը կարելի է որոշել հետևյալ կերպ:

$$\Delta R = R_1 - R_0, \quad (1)$$

իսկ շարժմանը՝ ամփոփ ինդեքսի միջոցով.

$$I_R = \frac{\sum R_1}{\sum R_0} = \frac{\sum GDP_1^C}{\sum GDP_0} \cdot \frac{\sum GDP_1}{\sum GDP_0^C} \cdot \frac{d_1}{d_0} = I_q \cdot I_p \cdot I_d, \quad (2)$$

որտեղ՝ $\sum R_1$ -ն ու $\sum R_0$ -ն պետական բյուջեի եկամուտների հանրագումարն են հաշվետու և բազիսային ժամանակաշրջաններում,

$$\sum GDP_1 - ն ու \sum GDP_0 - ն՝ հաշվետու և բազիսային ժամանակա-$$

շրջանների ՀՆԱ մեծություններն ընթացիկ գներով,

$$\sum GDP_1^C - ն՝ հաշվետու ժամանակաշրջանի ՀՆԱ մեծությունը հա-$$

մադրելի (բազիսային ժամանակաշրջանի) գներով,

$$d_1 - ն ու d_0 - ն՝ անվանական ՀՆԱ-ի նկատմամբ պետական բյուջեի$$

եկամուտների տեսակարար կշռները հաշվետու և բազի-

սային ժամանակաշրջաններում,

$$I_q - ն՝ ՀՆԱ ֆիզիկական ծավալի ինդեքսը,$$

$$I_p - ն՝ ՀՆԱ դեֆլյատորը (գնի ինդեքսը),$$

⁵ Տես Մօվսիսյան Մ., Оценка и анализ динамики уровня налогового бремени в Республике Армения, «Актуальные проблемы и перспективы развития государственной статистики в современных условиях». Сборник материалов III международной научно-практической конференции, Саратов, 5–7 декабря 2016 г., Саратов, 2017. Том 2, էջ 117–120:
Տես նաև աղյուսակ 1:

I_d-ն՝ՀՆԱ-ի նկատմամբ բյուջեի եկամուտների տեսակարար կշռի ինդեքսը:

1-ին և 2-րդ բանաձևերի կիրառմամբ իրականացվել են ՀՀ և մի շարք երկրների պետական բյուջեների եկամուտների մակարդակների հավելածի վրա ազդող գործոնների համամասնությունների հաշվարկներ.

Այլուսակ 2

Երկրների պետական բյուջեի եկամուտների հավելածի մեջ ամի գործոնների բաժնեմասերը* (%)⁷

Երկիր	2001–2005	2006–2010	2015–2011	2016–2015	2017–2016
Հայաստան					
Ա	70.7	25.7	48.4	69.0	131.8
Բ	35.8	41.3	43.9	103.5	42.2
Գ	-6.6	33.0	7.7	-72.6	-73.9
Գերմանիա					
Ա	1.8 անգամ	47.4	31.6
Բ	2.1 անգամ	59.5	53.7
Գ	-2.9 անգամ	-6.9	14.8
ԱՄՆ					
Ա	13.7	27	42.6
Բ	14.8	107.8	50.7
Գ	71.5	-34.7	6.7
Հունգարիա					
Ա	34	-3.3	24.2
Բ	81.9	81.7	45.5
Գ	-15.9	21.7	30.3
Իտալիա					
Ա	28.3	-10.8	-33.2
Բ	95.3	69.9	94.9
Գ	-23.5	40.9	38.3
Լիհաստան					
Ա	20.9	63.7	47.4
Բ	20.8	44.5	38.9
Գ	58.4	-8.2	13.7
Էստոնիա					
Ա	32.4
Բ	29
Գ	38.6
Ռուսաստան					
Ա	11.2	21.9	8.9
Բ	76.4	103.7	115.1
Գ	12.4	-25.5	-24
Աղրբեջան					
Ա	...	25.7	-12.5
Բ	...	28.5	112.5
Գ	...	45.8	0
Բելառուս					
Ա	...	72.3	1.3
Բ	...	190.3	94.8
Գ	...	-162.7	3.9
Ֆրանսիա					
Ա	43.6	22.9	20.1
Բ	53.5	101	39.5
Գ	3.0	-23.8	40.5

* Ա-ն հավելածն է՝ ի հաշիվ ՀՆԱ ֆիզիկական ծավալի փոփոխության, Բ-ն հավելածը՝ ի հաշիվ գների փոփոխության, Գ-ն հավելածը՝ ի հաշիվ ՀՆԱ-ի նկատմամբ պետական բյուջեի եկամուտների տեսակարար կշռի փոփոխության:

⁷Հաշվարկման իիմքում ընկած են հետևյալ աղբյուրները. Ռուսիա և страны мира, 2006, էջ 77–79, 333–335, Ռուսիա և страны мира, 2016, էջ 77–81, 294–296:

ՀՀ պետական բյուջեի եկամուտների բացարձակ հավելածերի մեջ առանձին գործոնների մասնաբաժինների մակարդակները դիտարկվող հնգամյա ժամանակահատվածներում դրսկորել են էական տատանումներ:

Այսպես՝ 2001–2005 թթ. ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջեի եկամուտների աճի 70.7 տոկոսը կամ 159.9 մլրդ դրամը պայմանավորված է եղել արտադրության ֆիզիկական ծավալի աճով. նշված ժամանակահատվածում աճել է՝ 78 տոկոսով, իսկ եկամուտներ/ՀՆԱ գործոնը 6.6 տոկոսով կամ 14.9 մլրդ դրամով բացասաբար է անդրադարձել բյուջեի եկամուտների աճի վրա:

Հետագա (2005–2010 թթ. և 2010–2015 թթ.) հնգամյա ժամանակահատվածներում արձանագրվել են գործոնների ազդեցության չափի համամասնությունների փոփոխություններ. մասնավորապես՝ գների փոփոխությունների ազդեցության մասնաբաժինը կազմել է պետք քան 40 տոկոս, իսկ եկամուտներ/ՀՆԱ գործոնի մասնաբաժինն ավելացել է մինչև 33 տոկոս, այնուհետև, 2010–2015 թթ. ժամանակահատվածում նվազելով 25.3 տոկոսային կետով՝ կազմել է 7.7 տոկոս:

2016–2017 թթ. համար արտադրության ֆիզիկական ծավալի ազդեցության չափը 2015–2016 թթ. համեմատությամբ ավելացել է 62.8 տոկոսային կետով և կազմել 131.8 տոկոս, իսկ դեֆյատորի մասնաբաժինը նվազել է 61.3 տոկոսային կետով՝ կազմելով 42.2 տոկոս: Այդ նույն ժամանակահատվածների համար եկամուտներ/ՀՆԱ գործոնի ազդեցությունը եղել է բացասական՝ կազմելով, համապատասխանաբար՝ 72.6 և 73.9 տոկոս:

Պետական բյուջեի եկամուտների աճի գործոնների հարաբերակցություններն արտահայտում են տվյալ երկրի տնտեսության զարգացման առանձնահատկությունները, առաջին հերթին՝ դրա աճի տեմպերի և գնաճի մակարդակների տարբերությունները: Մեր դիտարկած որոշ երկրներում առանձին ժամանակահատվածների համար բյուջեի եկամուտների գումարային հավելածի մեծ մասը պայմանավորված է եղել գների աճով (այսուսակ 2):

Այսուսակ 1-ի տվյալներից ակնհայտ է դաշնում, որ ՀՀ պետական բյուջեի եկամուտների 90–94 տոկոսը կազմում են հարկային եկամուտները, հետևաբար՝ անհրաժեշտ է հաշվարկել հարկային սահունության (առաջականության) գործակիցը, որը, տոկոսային արտահայտությամբ, բնութագրում է մեկ տոկոս ՀՆԱ փոփոխությանը բաժին ընկնող հարկերի փոփոխությունը և հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$E_T = \frac{\Delta T}{T_0} : \frac{\Delta GDP}{GDP_0}, \quad (3)$$

որտեղ՝ ΔT -ը ու ΔGDP -ն հարկային եկամուտների և ՀՆԱ հավելածերն են,


T_0 -ը ու GDP_0 -ն՝ բազիսային ժամանակաշրջանի հարկային

եկամուտների և ՀՆԱ մակարդակները:

Հարկային սահունության հաշվարկված գործակիցները ցույց են տալիս, որ ուսումնասիրվող ժամանակաշրջանի գրեթե բոլոր տարիներին՝ բացառությամբ 2000 և 2009 թթ., ՀՆԱ աճի յուրաքանչյուր տոկոսային կետի աճը հաճգեցրել է հարկային եկամուտների աճի:

2000 թ. ՀՆԱ մեկ տոկոս աճն ուղեկցվել է հարկային եկամուտների 0.7 տոկոս անկնամբ, ինչը պայմանավորված է եղել պետական բյուջեի հարկային եկամուտների թերակատարմամբ, իսկ 2009 թ. սահունության գործա-

Կիցը կազմել է -1.2 տոկոս, ինչը նշանակում է՝ ՀՆԱ անկման յուրաքանչյուր տոկոսային կետին բաժին է ընկել հարկերի 1.2 տոկոսային կետով անկում: Անկման նման մակարդակը պայմանավորված է եղել համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամով, երբ անվանական ՀՆԱ-ն նվազեց 12 , իսկ իրական ՀՆԱ-ն՝ 14.1 տոկոսային կետով:



Գծապատկեր 1. Հարկային սահունության շարժմնթացը ՀՀ-ում⁸

Դիտարկվող ժամանակաշրջանում սահունության գործակցի ամենաբարձր մակարդակն արձանագրվել է 2016 թ., երբ ՀՆԱ մեկ տոկոս աճը հանգեցրեց հարկերի 2.4 տոկոսով կամ 25.9 մլրդ դրամով աճի:

Անփոփելով կարող ենք արձանագրել, որ հոդվածում առաջարկվող մեթոդը հնարավորություն է ընձեռում իրականացնելու պետական բյուջեի Եկամուտների մակարդակի փոփոխության վրա ազդող կարևոր գործուների՝ արտադրության ծավալների, Եկամուտներ/ՀՆԱ հարաբերակցության մակարդակի և գնաճի վիճակագրական գնահատում և վելլուծություն:

Օգտագործված գրականություն

- Մովսիսյան Մ., «Հարկական բյուջեի հարկային Եկամուտների կառուցվածքի և դիմանմիկայի վիճակագրական վերլուծությունը», «ՀՀ մարզային տնտեսության զարգացման հիմնախնդիրները» հանրապետական գիտաժողովի նյութեր, Եղեգնաձոր, 2016:
- Մովսիսյան Մ., «Հարկական բյուջեի Եկամուտների դասակարգման համադրելիության ապահովման մոտեցումները», Եր., «Բանբեր ՀՊՏՀ», N1, 2016:
- Մովսիսյան Մ., Оценка и анализ динамики уровня налогового бремени в Республике Армения, «Актуальные проблемы и перспективы развития государственной статистики в современных условиях». Сборник материалов III международной научно-практической конференции, Саратов, 5–7 декабря 2016 г., Саратов, 2017.
- Россия и страны мира, 2006, Россия и страны мира, 2016.
- <https://data.oecd.org/gga/general-government-revenue.htm#indicator-chart>

⁸ Գծապատկերը կառուցել է հեղինակը ՀՀ ՎԿ տվյալների հիման վրա:

МАНУК МОВСИСЯН

Декан факультета управления АГЭУ,
кандидат экономических наук, доцент

Статистическая оценка влияния факторов на доходы государственного бюджета.— В статье осуществлен анализ уровня и динамики факторов, влияющих на уровень доходов государственного бюджета. С помощью применения индексного метода дана оценка влияния каждого фактора на изменение уровня доходов государственного бюджета.

Ключевые слова: доходы бюджета, налоговые доходы, номинальный ВНП, реальный ВНП, дефлятор.

JEL: C4, H60, H68

MANUK MOVSISYAN

*Dean of the Management Department at ASUE,
PhD in Economics, Associate Professor*

The Statistical Evaluation of Factors Influencing the State Budget Revenue Level.— In the article the levels and dynamics of factors influencing the RA state budget revenues have been analyzed, as well as the impact of each factor on the change of budget revenue level has been evaluated implementing the index method.

Key words: budget revenues, tax revenues, nominal GDP, real GDP, deflator.

JEL: C4, H60, H68